

**ՔԱՂՎԱԾՔ**  
**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ**  
**Կ Ա Ր Գ Ի Ց**

\*\*\*\*\*

**XI. ԱՌՅԱՆՑ ՁԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Առցանց ձևով վերապատրաստումը կազմակերպում է ՀՀ փաստաբանների պալատը:

2. Առցանց ձևով վերապատրաստումանը կարող են մասնակցել բոլոր փաստաբանները, սակայն մեկ կիսամյակի համար այն կարող է հաշվարկվել ոչ ավել **4 (չորս)** ժամից, բացառությամբ Կարգի 51-րդ կետում նշված փաստաբանների, որոնք առանց սահմանափակման կարող են մասնակցել առցանց ձևով վերապատրաստումանը

3. Կարգի 32-րդ կետի ա. և բ. ենթակետերում նշված փաստաբաններն իրենց հաշվին կարող են առցանց վերապատրաստման դասընթացներից օգտվել մեկ կիսամյակի համար ոչ ավել **8 (ութե)** ժամից՝ Կարգի VI գլխով նախատեսված կարգով:

4. Առցանց վերապատրաստման յուրաքանչյուր դաս բաղկացած է առնվազն մեկ ժամից և չի կարող գերազանցել չորս ժամը:

5. Փաստաբաններն առցանց վերապատրաստումանը մասնակցելու համար համակարգ են մուտքագրում իրենց արտոնագրի համարը, անունը, ազգանունը և էլեկտրոնային փոստի հասցեն:

6. Դասընթացին մասնակցելու համար փաստաբանը լրացնում է համապատասխան թեսթ, համակարգը հաշվում է թեսթի արդյունքը, որը երևում է էկրանին, և պահվում տվյալների բազայում:

7. Տեսաձայնագրված դասընթացը յուրաքանչյուր 10-15 րոպեն մեկ անգամ ընդհատվում է թվաբանական կամ թեսթային հարցերով: Հարցերին ճիշտ պատասխան տալուց հետո դասընթացը շարունակվում է, հարցերի սխալ պատասխանի դեպքում դասընթացն ընդհատվում է, իսկ փաստաբանը համարվում է առցանց վերապատրաստումանը չմասնակցած:

8. Դասընթացն ավարտվելուց հետո փաստաբանը կրկին թեսթ է լրացնում, որի դրական պատասխանի դեպքում համակարգը փաստաբանի տվյալներն ուղարկում է տվյալների բազա, ինչը հնարավորություն է ընձեռում հաշվարկել փաստաբանի մասնակցությունը Առցանց դասընթացին՝ որպես պարտադիր վերապատրաստման ժամ: Թեսթի բացասական պատասխանի դեպքում փաստաբանի Առցանց վերապատրաստման ժամերը չեն հաշվարկվում: